Ահա թե ինչու՝ կցանկանայի, որ Դուք՝ որպես փոքր և, միևնույն ժամանակ, մեծ Ղարաբաղի Հանրապետության առաջնորդ, իմանաք, որ այս խավար, այսքան դժնդակ ու դժվար օրերին, երբ դաժան մարտերում այդքան մարդ է սպանվում Հայաստանի և հայերի թշնամիների կողմից, այդ նրանք են սանձազերծել, ովքեր չեն հանդուրժում ձեր գոյությունն այդտեղ՝ Լեռնային Ղարաբաղում՝ բարձր պահելով քրիստոնյա հայ ժողովրդի անկախության դրոշը, որն այդտեղ է վաղնջական ժամանակներից և առհավետ:

Իրականում մեծ խաբեությունն այն է, որ փորձելով հավատացնել աշխարհին, Ղարաբաղի ժողովրդին այնպես են ներկայացնում, թե իբրև այդ ժողովուրդն աղբբեջանցիներին վտարել է իր լեռներից, երբ ակնհայտ և անժխտելի ճշմարտությունն ամբողջովին հակառակն է: Իրականում հայերն էին վտարվել Աղբբեջանի գյուղերից և քաղաքներից, նաև Հայոց ցեղասպանության ժամանակ, որը հայ ժողովրդի դեմ իրագործել էին թուրքերը, նաև հույն քրիստոնյաների, սիրիացի քրիստոնյաների, կալսության բոլոր քրիստոնյաների դեմ՝ Փոքր Ասիան և Կովկասը ամեն գնով թուրքացնելու և իսլամացնելու բացահայտ մտադրությամբ, անգամ՝ քրիստոնյա ժողովուրդների ֆիզիկական բնաջնջմամբ, որոնք, սակայն, չհնազանդվեցին, մինչև իսկ՝ իրենց բնաջնջման սպառնալիքի ներքո: Բայց աշխարհը գիտակցում է, որ Լեռնային Ղարաբաղը միշտ հայկական հող է եղել, որովհետև քարերը համառ

են, և այնտեղ հող ու մոխիր դարձած շատ աճյուններ կան, որոնք ապացուցում են, որ այդ լեռները պատկանել են այսօր այնտեղ ապրող հայերի նախնիներին դեռևս նեոլիթյան ժամանակաշրջանում: Այս ամենը հավաքագրված և փաստագրված է Հայաստանի պատմության թանգարանում:

Ղարաբաղի հայ ժողովուրդն ապրում է այդ նույն լեռներում, այդ նույն հովիտներում և լսում լեռներից իջնող գետակների կարկաչյունն ամենավաղ ժամանակներից ի վեր, իր գոյության ողջ ընթացքում: Դեռևս հնագույն ժամանակներում այդտեղ՝ Արցախում, նրանք առևտուր էին անում Բաբելոնի, Շումերների երկրի, Պարսկական կայսրության հետ:

Այժմ Հայաստանի թշնամիները հավակնում են ոչնչացնել հնագույն խաղաղասեր մի ժողովրդի՝ Լեռնային Ղարաբաղի հայերին, կեղծ պատրվակով, իբրև դրանք Ադրբեջանի հողերն են, այնինչ շատ լավ գիտեն, որ այդ հողը միշտ եղել է հայկական հող, քրիստոնեական հող մեր թվագրության IV դարի սկզբներից ի վեր: Տեղյակ լինելով այդ ամենին՝ նրանք միայն հավակնում են ոչնչացնել մի մշակույթ, որովհետև այն հայկական մշակույթի մասն է կազմում, թեև գիտեն, որ բացառությամբ սակավաթիվ դեպքերի՝ ադրբեջանցիները երբեք չեն ապրել այդ երկրում և երբեք էլ չեն ապրի: Նրանք միայն բուռն ցանկություն ունեն աշխարհին ապացուցելու, որ կարող են ոչնչացնել բոլոր նրանց, ում իրենց դարավոր թշնամին են համարում, չհասկանալով, որ ամենախոհեմ, ողջամիտ, քաղաքակիրթ որոշումն է մոռանալ անիմաստ ատելությունը և ընտրել բոլորովին տարբեր մի այլ ճանապարհ:

Պարո՛ն նախագահ Հարությունյան, ուզում եմ Ձեզ հավաստիացնել, որ Լեռնային Ղարաբաղի հայերը միայնակ չեն: Իսպանիան, Եվրոպան և Արևմուտքը ծանոթ են իրավիճակին. լավ գիտեն, թե ով է կանգնած այս դաժան հարձակման հետևում, ով է ուղարկել ինքնաթիռները, ծանր զինատեսակները, հրետանին, վերջին սերնդի անօդաչու սարքերը, ով է հազարավոր վարձկան ջիհադիստների ուղարկել այդ տարա-

ծաշրջան, որոնցից շատերը նույնիսկ հարկադրված են եկել, քանի որ ցանկացել են մնալ ազատության մեջ, մյուսները՝ Արևմուտքի և քրիստոնյաների նկատմամբ ատելությամբ լի որպես կամավորներ են եկել այդ գարշելի գործն իրագործելու համար, ինչպես ողբերգական ձևով տեղի ունեցավ վերջին տարիներին Սիրիայում, իսկ հիմա՝ փորձում են ահաբեկել մի ժողովրդի, որն իր երկարատև պատմության ողջ ընթացքում կրել է ճակատագրի շատ վայրիվերումներ՝ չվախենալով ոչ մի բանից: Վարձկաններին ուղարկողները կարծես թե չգիտեն, որ մարդկությունը պատերազմ չի կամենում, այլ՝ ժողովուրդների միջև խաղաղություն, նաև չգիտեն, որ այս հակամարտությունից հայերը նորից դուրս կգան հաղթանակած, քանի որ նրանց թշնամիներին երբեք չի հաջողվի հաղթել հայ ժողովրդին, քանզի նրանցն է պատմության, բանականության և ճշմարտության ուժը:

Պարո՛ն նախագահ Հարությունյան, այսօր հայերը պահանջում են, որ և՛ Աշխարհը, և՛ Եվրոպան, և՛ Իսլամական իրենց չմոռանան, քանի դեռ դիմակայում են իրենց դեմ սանձազերծված անարդար պատերազմին: Երբ ավարտվեց Մեծ պատերազմը՝ Առաջին համաշխարհային պատերազմը, ԱՄՆ նախագահ Վիլսոնը, քաջատեղյակ լինելով հայերի դեմ իրագործված ցեղասպանությանը, որոշում ընդունեց Սևրի պայմանագրով (1920թ.) Փոքր Ասիայի և Կովկասի արդար բաժանում կատարել, որին ընդդիմացան թուրքերը՝ Քեմալ Աթաթուրքի գլխավորությամբ, պայմանագիր, որը չեղյալ հայտարարվեց 1923թ. Լոզանի պայմանագրով, որում դաշնակիցները, կուշտ լինելով պատերազմից, անտարբերության մատնեցին այս ամենը: Այդժամ տեղի ունեցավ պատմական կեղծիք, և հայերը ստացան Սևրի պայմանագրով համաձայնեցված տարածքների նվազագույն մասը: Բայց նրանք չստորագրեցին Լոզանի պայմանագիրը, հետևաբար՝ պատմականորեն շարունակում են պաշտպանել վիլսոնյան Հայաստանը: Սա է դիվա-

նագիտական ճշմարտությունը, թեև ոմանք չեն էլ ցանկանում լսել այդ մասին:

Ճշմարտությունն այն է, որ այսօր հայ երիտասարդներն են նահատակվում անարդար պատերազմում, մինչդեռ ջի-հադիստ ահաբեկիչներին ուղարկում են տարածաշրջան՝ փորձելով ապակայունացնել Հայաստանը, մինչդեռ մի ռազմական գերտերության գերժամանակակից ինքնաթիռները ռմբակոծում են Արցախի Հանրապետության լեռների փոքրիկ բնակավայրերը, որտեղ ապրում են խաղաղասեր մարդիկ, քրիստոնյաներ, որոնք միայն ցանկանում են շարունակել ապրել այն տարածքում, որն արդեն իսկ իրենցն էր, երբ Նոյն առաջին անգամ տրորեց խաղողի ողկույզը:

Պարո՛ն նախագահ Հարությունյան, հայերը երբեք մենակ չեն լինի, մենք՝ միլիոնավոր կանայք ու տղամարդիկ, ձեզ հետ ենք, որովհետև դուք գտնվում եք բանականության, արդարության և ճշմարտության հովանու ներքո:

Ջերմ ողջույններ եմ Ձեզ հղում այդքան հեռավոր ու այդքան մոտիկ Իսպանիայից:

Ալմերիա, Իսպանիա, 8 հոկտեմբերի 2020թ.

Գ. Հ. ԳՈՒԱՐԶ, գրող

*Թարգմանությունը՝ Սոնա Մխիթարյանի
(«Իսպաններեն լեզու և գրականություն» բաժնի
մագիստրոս)*

TRADUZIONI
DALL' ITALIANO IN ARMENO
E DALL' ARMENO IN ITALIANO



ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԻՏԱԼԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻՑ ԻՏԱԼԵՐԵՆ

Ու. Վոլլին արվեստի քննադատ է, նշանագիտության ոլորտում հեղինակավոր գիտնական: Դասախոսել է աշխարհի ամենահայտնի համալսարաններում, հեղինակ է բազմաթիվ աշխատությունների, որոնցում արծարծում է ցեղասպանության, այդ թվում նաև հայոց ցեղասպանության, ազդեցության թեման արվեստի մեջ:

ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարո՞ղ է արդյոք արվեստն իր խոսքն ասել ցեղասպանության վերաբերյալ: Կամ, ավելի ճիշտ կլինի, ինքդ քեզ այս հարցն ուղղես. «Հնարավո՞ր է արդյոք զբաղվել արվեստով ցեղասպանություն ապրելուց հետո»: 1949թ. Թեոդոր Վիգունգրունդ Ադոռնոն, հրեական ծագմամբ գերմանացի փիլիսոփան և երաժշտագետը, դա ժխտում էր՝ ասելով. «Բանաստեղծություն գրելը «Աուշվից»-ից հետո, բարբարոսական ակտի է նման»:

Շատ արվեստագետներ, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով ցեղասպանության զոհ են դարձել, իրենց վրա անշուշտ կրել են անկարողության այդ զգացումը, որը կարծես լիովին անհնարին է դարձնում արարելու իրենց մղումն ու կոչումը:

Նման ամենահայտնի դեպքերից է 1900-ականների մեծ բանաստեղծ Պոլ Մելանի դեպքը, որը Շոայից մազապուրծ է լինում, սակայն, ի վերջո ինքնասպանություն է գործում Փարիզում՝ 1970 թվականին: Նույն ճակատագրին են արժանանում նաև Պրիմո Լևին և Բրունո Բեթելիեյմը:

1939 թվականին, սակայն, Բերտոլդ Բրեխտը իր հայտնի բանաստեղծության մեջ «Կերզե՞ն արդյոք մութ ու դաժան ժամանակներում» հարցին արդեն ակնարկում էր հետևյալ պատասխանը. «Կերզեն մութ ու դաժան ժամանակների մասին»:

Խոսել ցեղասպանության, մեծ ողբերգության ու ցավի մասին, ուղղակի պարտականություն է, անհրաժեշտություն: Դաժան արհավիրքից հետո այն թույլ է տալիս հաղթահարել տառապանքը, հաղթահարել ազնիվ մղումով արարվող արվեստի գործի թվացյալ անիմաստության և անօգտակարության ընկալումը, զգացումը: Եվ դա իրոք այդպես է, քանի որ հաղորդակցումը հիշողության նախադրյալն է, հիմնաքարը, իսկ հիշողությունը՝ արտահայտման իր տարբեր դրսևորումներով, կարող է դառնալ հզոր ու կանխարգելող մի զենք այնպիսի ահռելի ու սարսափելի հանցագործության դեմ, ինչպիսին մի ամբողջ ժողովրդի նպատակամղված ու շարունակական բնաջնջումն է՝ ներառյալ վերջինիս մշակույթի, հասարակության, պատմության ոչնչացումը:

Սարսափելին այն է նաև, որ իրականացնելով մարդկանց զանգվածային ոչնչացում, ոչնչանում են մարդիկ, որոնք անհատականություններ են և որոնցից յուրաքանչյուրը «մի յուրօրինակ աշխարհ է», ինչպես միշտ համարել են ու համարում են իմաստուններն ու բարեպաշտները:

Ցեղասպանության հիշողության պահպանման և դրա մասին խոսելու պարտականությունն ընկնում է բոլորի ու մեզանից յուրաքանչյուրի վրա, բայց, առավել ևս, արվեստագետների վրա, քանի որ այն, ինչ նրանք ձգտում են փոխանցել ու արտահայտել իրական արվեստին հասնելու համար, պետք է անհրաժեշտությամբ թելադրված լինի, պետք է տա արվեստի ընձեռած հնարավորությունից, հաճույքից ու վայելքից, շուկայական հարաբերություններից և արվեստագետի իր կոչումից վեր կանգնած իմաստալից հարցի պատասխանը: Ուրեմն, արվեստագետը «մութ ու դաժան ժամանակներում երգելու» պարտավորության առջև է կանգնած:

Այս պարտավորությունը վերաբերում է բոլոր ցեղասպանություններին, որոնք, ցավոք, քիչ չեն: Անհրաժեշտ է հատկապես այն ցեղասպանությունների հիշողության պահպանման համար, որոնք չեն ճանաչվում և համառորեն ժխտվում

են, որոնք պետական հանցագործություն են ու պետությունը իր մեղսակցությունը թաքցնում է՝ փորձելով մեղադրել գոհե-
րին իրենց իսկ ողբերգության համար՝ բնորոշելով վերջին-
ներիս որպես կեղծարարներ ու խեղաթյուրողներ: Մեր օրերի
բոլոր ցեղասպանությունները, սկսած այն ժամանակներից,
երբ սկիզբ առան լրագրությունը, հանրային կարծիքը, միջազ-
գային արդարադատությունը, բոլորը ծրագրված են, պատ-
վիրված և իրականացված գաղտնի կամ կիսով չափ գաղտնի
կերպով, այնպես, որ այնուհետև կարողանան ոճրագործներին
երաշխավորել առավելագույն անպատժելիություն: Մա տեղի
է ունեցել հատկապես հայերի ցեղասպանության դեպքում,
երբ թուրքական պետությունը փորձեց ոչ միայն ամեն գնով
ժխտել իրականությունը, այլ շատ գործուն կերպով ջնջել
ցեղասպանության հետքերը: Հարկավոր է կարդալ Թաներ
Ակչամի «Հրամայված է սպանել» պատմական-դեղեկտիվ
ժանրի գործը (վերջերս «Գուերինի» հրատարակչատան կող-
մից արժանիորեն թարգմանված նաև իտալերեն), որպեսզի
հասկանալի լինի, թե ինչ աստիճան փութաջանությամբ թուր-
քական պետական կառույցները մեկ դար շարունակ տարբեր
ռեժիմների օրոք (բացառությամբ Առաջին համաշխարհային
պատերազմում պարտությանը անմիջապես հաջորդած եր-
կու-երեք տարիների) ոչ միայն լիովին որդեգրեցին ժխտողա-
կան և ցեղասպանության թեման հանրային գիտակցությունից
ու դիսկուրսից դուրսմղման քաղաքականություն, այլև դիմե-
ցին վկայությունների ու ապացույցների ոչնչացմանը, առաջին
հերթին հենց իրենց իսկ թուրքական պետական պաշտոնա-
կան փաստաթղթերի ոչնչացմանը: Հանցագործ լուրջության և
ոճրագործությունը թաքցնելու այս քաղաքականության առջև
մտավորականների ու արվեստագետների ասելիքը չափա-
զանց կարևոր է, նրանց պատմական դերը՝ շատ մեծ, այնքան
մեծ, որ լիովին արդարացնում է «մութ ու դաժան ժամանակ-
ների» դժվարությունն ու դառնությունը հաղթահարելու գոր-
ծոնը և բացառում է անօգուտության, ավելորդության,

անիմաստության վտանգը, արվեստը զուտ առևտրային խաղերի առարկա դարձնելու հանգամանքը, որին բախվում է հատկապես պոստմոդերն հասարակությունը:

Այստեղ, սակայն, կա շատ ավելի կարևոր մեկ հանգամանք նա. էլ ավելի է կարևորվում ու արժևորվում արվեստի ասելիքը (ինչ ձևերով էլ այն դրսևորվի, լինի դա բառերով, պատկերներով ու ստորագրություններով, նկարահանումներով, թե հնչյուններով): Դա այն դեպքն է, երբ դեռևս ընթացքի մեջ է, շարունակվում է: Ցեղասպանության ժխտումն արդեն իսկ դրա անվերջ շարունակությունն է, ինչպես փորձեցինք դա ապացուցել Մարտինա Կորնիատիի հետ *«Անվերջ ցեղասպանությունը»* գրքում, որը մի քանի տարի առաջ նույնպես հրատարակվել է «Գուերինի»-ի կողմից: Ժխտված ցեղասպանությունը պարտավորվում է ոչ միայն ջնջել իր մեղքի հետքերը, այլ նաև իր զոհերի հետքերը, զոհեր, որոնք մի ամբողջ ժողովուրդ են ներկայացնում և ոչ առանձին անհատներ և, ուրեմն, պետք է անհետացնի նրա մշակույթը, բառացիորեն՝ ջլատի ու հողի տակ թաղի այն: Ցեղասպանության այս դիտարկման մեջ նույնպես հայերը մեր ժամանակների ամենամեծաքանակ զոհերն են համարվում: Հայկական բարձր արվեստի հետքերը, որ սփռված էին այն տարածքներում, որոնք այսօր Թուրքիայի ու Ադրբեջանի հսկողության տակ են, պարբերաբար ավերվել են, հողին հավասարեցվել ու ոչնչացվել: Եվ սա անցյալի ոչնչացումն է, մշակույթային ժառանգության ոչնչացումը, որն ուղղակիորեն առնչվում է արվեստագետներին, քանի որ նրանց ներքաշում է խաղի մեջ՝ հարցադրումներ անելով նրանց դերի վերաբերյալ: Իրականում արվեստի յուրաքանչյուր գործ, բացի անհատական լինելուց, նաև որոշակի մշակույթի, ավանդույթների, ժողովրդի դրսևորման ձևն է:

Տարիներ առաջ, երբ Կորնիատին և ես համարում էինք, որ հայոց ցեղասպանությունը չի ավարտվել և դեռ շարունակվում է, դա ընդունվեց որպես փոխաբերություն, անգամ չափազանցություն: Սակայն վերջին ռազմաքաղաքական իրադարձու-

թյունները, ադրբեջանաթուրքական ագրեսիան Հայաստանի Հանրապետության դեմ, դրան հաջորդած պատերազմն ու ռազմական գործողությունների հետևանքները, ինչպես նաև ագրեսորների հայտարարությունները, ցույց են տալիս, որ վերջիններս չեն հրաժարվում հայ ժողովրդի բնաջնջման իրենց նպատակից և այն, ավելի քան երբևէ, արդիական է դարձել: Ցեղասպանությունը այժմ նորից շարունակվում է գենքի ուժով: Այսօր առանձնապես այս իրավիճակում պահանջվում է ազատամիտ մարդկանց և արվեստագետների վկայություն, ջանք, ընդվզում: Ինչպես ազատությունը, այնպես էլ հանրային կյանքը համամարդկային անձեռնմխելի արժեք է, բարիք: Ոչ ոք չի կարող լինել հանգիստ և լռել, երբ փորձ է արվում բնաջնջել հազարամյա պատմություն ունեցող մի ազգի և ոչնչացնելու այնպիսի յուրօրինակ մի մշակույթ, ինչպիսին հայկականն է: Անընդունելի է անտարբերությունը այս ողբերգության հանդեպ: Սա արվեստագետների, մտավորականների պարտքն է, այն բոլոր մարդկանց, ովքեր գիտեն մտքի և խղճի ազատության արժեքն ու պատասխանատվություն են զգում դրանց արտահայտման համար: Հարկավոր է խոսել, հարկավոր է իրազեկել, հարկավոր է ահազանգել, ներկայացնել, որպեսզի ապագայում ոչ ոք չասի՝ «չգիտեի»:

*Թարգմանությունը՝ Արաքսյա Ստեփանյանի
(Ռումանական բանասիրության ամբիոնի դասախոս)*

ՄԱՐՄՈՏԱ ԹԱԳՈՒՇԻՆ (իտալական ժողովրդական հեքիաթ)

Իսպանիայում ապրում էր Մասիմիլիանո անունով մի ուղղամիտ և առաքինի թագավոր: Նա երեք որդի ուներ՝ Գուլյեռմոն, Ջովաննին և Անդրեին, որոնցից կրտսերը հոր ամենասիրելին էր: Թագավորը հիվանդանում է և կորցնում տեսողությունը: Կանչում են թագավորության բոլոր բժիշկներին, սակայն ոչ մեկին հայտնի չէր մի այնպիսի սպեղանի, որ կբուժեր թագավորին: Ամենից տարեցներից մեկն ասում է.

- Այստեղ բժշկությունը անգոր է, պետք է գուշակ կանչել:

Թագավորության բոլոր ծայրերից կանչում են գուշակների. սկսում են իրենց գրքերն ուսումնասիրել, սակայն նրանցից ոչ ոք չի կարողանում որևէ բանով օգտակար լինել: Գուշակների հետ սակայն ներս էր սողոսկել նաև մի մոգ, ով բոլորից աննկատ էր մնացել: Եվ երբ ամեն մեկն իր հերթին հայտնում է իր ասելիքը, վերջինս առաջ է գալիս ու ասում.

- Ես գիտեմ Ձեր կուրության պատճառը, թագավոր՝ Մասիմիլիանո: Սպեղանին կարելի է գտնել միայն Մարմոտա թագուհու քաղաքում. դա այնտեղի ջրհորի ջուրն է:

Այս բառերի առաջացրած զարմանքը դեռ չէր էլ անցել, երբ մոզն անհետացավ, և ոչ ոք նրա մասին այլևս ոչինչ չիմացավ:

Թագավորը ցանկացավ իմանալ, թե ով էր նա, սակայն նրան նախկինում ոչ ոք երբևէ չէր տեսել: Գուշակներից մեկը կարծում էր, որ նա հեռավոր Արմենիա երկրից եկած մի մոգ էր, որ այստեղ էր հասել հմայությամբ: Թագավորը հարցնում է.

- Եվ Մարմոտա թագուհու քաղաքը պետք է որ այդ հեռավոր կողմերում լինի:

Այդ ժամանակ արքունիքի ալևորներից մեկը պատասխանում է.

- Մինչև չփնտրես, չես իմանա՝ որտեղ է: Եթե ես ավելի երիտասարդ լիների, անհապաղ ճամփորդության կմեկնեի:

Առաջ է գալիս Գուլյեռմոն՝ թագավորի ավագ որդին.

-Եթե կա մեկը, որ պետք է ճամփորդության մեկնի, այդ ես եմ: Հիրավի որդիներից առաջինը պետք է առաջին հերթին հոգ տանի հոր առողջության մասին:

-Թանկագին որդյակս,- ասում է թագավորը,- օրհնյալ լինե՛ս: Վերցրու՛ քեզ հետ մետաղադրամներ և ձիեր և այն ամենը, ինչ քեզ պետք կգա: Ես երեք ամիս շարունակ կսպասեմ քո պանծալի վերադարձին:

Գուլյեռմոն արքայական նավահանգստից բարձրանում է մի նավ, որն ուղևորվում էր դեպի Բուդա կղզի, որտեղից էլ երեք ժամ կայանելուց հետո պետք է նավարկեր դեպի Արմենիա երկիր: Բուդա երկրում Գուլյեռմոն նավից իջնում է՝ կղզին նայելու, այդպես շրջելով հանդիպում է սիրատենչ շարժուձևով մի կնոջ և այնքան է տարվում նրա հետ զրուցելով, որ երեք ժամը նրա համար աննկատ անցնում է: Այդ ժամանակ, ինչպես և պայմանավորված էր, նավը արձակում է առագաստները և թողնում Գուլյեռմոյին կղզում: Սկզբում Գուլյեռմոն ափսոսում է դրա համար, սակայն կնոջ ընկերակցությունը մոռացության է տալիս հոր հիվանդությունն ու ճամփորդության նպատակը: Անցնում է երեք ամիս: Տեսնելով, որ որդին չի վերադառնում, թագավորը սկսում է մտածել, որ Գուլյեռմոն մահացել է, և տեսողության կորստի ցավին ավելանում է նաև որդու կորստյան ցավը: Նրան մխիթարելու համար Ջովաննին՝ միջնեկ որդին, առաջարկում է, որ ինքը ուղևորվի թե՛ եղբորը, և թե՛ հրաշագործ ջուրը փնտրելու: Եվ թագավորը նրան էլ է թույլ տալիս գնալ, թեպետ մտավախություն ուներ, որ նրան էլ մի դժբախտություն կպատահի:

Նավ բարձրանալով՝ Ջովաննին կարճ ժամանակում հասնում է Բուդա կղզի: Այս անգամ նավը կանգ է առնում կես օրով: Ջովաննին իջնում է նավից՝ կղզին այցելելու. մտնում է մրտենիների, դափնիների և կիպարիսների այգիներ, որտեղ վճիտ լճակներ կային՝ լի բազմագույն ձկներով. ապա հասնում է գեղեցիկ արահետներով և փողոցներով մի գյուղակ, որի

հրապարակում մարմարե մի ավագան կար, շուրջբոլորն էլ կոթողներ ու շինություններ էին, իսկ ուղիղ կենտրոնում մի հոյակերտ ապարանք կար՝ ոսկեզօծ և արծաթազօծ սյուներով, բյուրեղապակյա պատերով, որ փայլվում էին արևի լույսի տակ: Այս բյուրեղապակյա պատերից անդին Ջովաննին տեսնում է հանդարտ ճեմող իր եղբորը:

-Գուլյեոմո՛,- գոչում է նա,- դու այստե՛ղ ես: Ինչո՞ւ չվերադարձար: Մենք էլ կարծում էինք՝ մեռած ես:

Երկու եղբայրները գրկախառնվում են: Գուլյեոմոն պատմում է, թե ինչպես պատահեց, որ հասնելով այս կղզի՝ այլևս անկարող եղավ վերադառնալ և թե ինչպես իրեն դիմավորեց մի գեղեցիկ կին, որն իրենց շուրջ եղած ամեն բանի տիրուհին է:

-Այդ կնոջ անունը Լուջիստելլա է,- հավելեց,- և նա մի չքնաղ կրտսեր քույր ունի՝ Իզաբելլա անունով. եթե ցանկանաս, Ջովաննի՛, նա քոնը կլինի:

Եվ այդպես, անցնում է տասներկու ժամ, նավը ճանապարհ է ընկնում առանց Ջովաննիի: Նա ևս, սկզբնապես խղճի խայթ զգալուց հետո, մոռանում է հորն ու հրաշագործ ջուրը ու եղբոր պես հյուրընկալվում բյուրեղապակյա ապարանքում: Անցնում են սպասված երեք ամիսները: Մասիմիլիանո թագավորը, չտեսնելով իր երկրորդ որդու վերադարձը, երկյուղի մեջ է ընկնում, և նրա հետ ամբողջ արքունիքը հայտնվում է վշտի ու տառապանքի ճիրաններում: Այժմ խիզախելու հերթը Անդրեինոյինն էր, և նա հորը հայտնում է, որ եղբայրներին և Մարմոտա թագուհու ջուրը փնտրելու է գնում ինքը:

-Դու նույնպե՞ս ցանկանում ես ինձ լքել,- ասում է թագավորը:- Կույր և վշտալլուկ՝ հիմա էլ պետք է առանց որդիներիս մնամ:

Սակայն Անդրեինոն հորը հուսադրում է, որ անպատճառ կտեսնի իր երեք ողջ-առողջ որդիների վերադարձը հրաշագործ ջրով, և հայրը տալիս է իր համաձայնությունը: Նավը

խարիսխ է ձգում Բուդա կղզու մոտ և կանգ առնում երկու օրով:

-Կարող եք իջնել նավից,-ասում է նավապետը Անդրեինոյին,- բայց հոգ տարե՛ք Ձեր վերադարձի մասին, եթե չեք ցանկանում մնալ ափին ինչպես այն երկու երիտասարդները, որոնցից ոչինչ այլևս հայտնի չէ:

Անդրեինոն հասկանում է, որ խոսքը իր երկու եղբայրների մասին է, և նրանք պետք է, որ կղզում լինեն: Այդժամ սկսում է շրջել ու նրանց հանդիպում է բյուրեղապակյա պալատում: Գրկախառնվում են, ու եղբայրները Անդրեինոյին պատմում են այն հմայության մասին, որն իրենց Բուդայում էր պահել:

-Իմացի՛ր, որ ասես դրախտում լինենք,- ասացին նրան,- մեզնից յուրաքանչյուրը մի գեղեցիկ սինյորա ունի. իմն է այս կղզու տիրուհին, իսկ նրա քույրը Ջովաննին է: Եթե դու նույնպես ցանկանում ես մնալ, կարծում եմ՝ մեր տիկնայք մի զարմուխի էլ ունեն: Սակայն Անդրեինոն ասում է.

-Տեսնում եմ, որ բոլորովին գլուխներդ կորցրել եք, եթե չեք հիշում ձեր հոր նկատմամբ ունեցած պարտքի մասին: Ես պետք է գտնեմ Մարմոտա թագուհու ջուրը, և ոչինչ ինձ չի կարող ետ պահել իմ մտադրությունից՝ ո՛չ հարստությունը, ո՛չ զվարճանքները, և ո՛չ էլ անգամ գեղեցիկ կանայք:

Եղբայրները լուռ լսում են այս խոսքերը ու վիրավորված մի կողմ շրջվում: Անդրեինոն անմիջապես նավ է վերադառնում: Նավն արձակում է առագաստները ու նպաստավոր քամու հետ հասնում Արմենիա երկիր:

Արմենիա հասնելուն պես՝ Անդրեինոն սկսում է բոլորին հարցնել, թե որտեղ է Մարմոտա թագուհու քաղաքը, թվում էր, սակայն, թե ոչ ոք երբևէ չէր լսել այդ անունը: Անօգուտ փնտրտուքներից շաբաթներ անց մի անծանոթ նրան ուղղորդում է Բարձրաբերձ լեռան գագաթին ապրող մի ծերունու մոտ: Ծերունին այնքան ծեր էր, որքան ինքը աշխարհը: Նրա անունն էր Ֆարֆանելլո: Եթե նա էլ չիմանար, թե որտեղ է այդ քաղաքը, ուրեմն ոչ ոք չէր իմանա: Անդրեինոն մագլցում է

լեռն ի վեր: Գտնում է զառամյալ մորուսավոր ալևորին մի հյուղակում և պատմում նրան իր փնտրտուքների մասին:

-Է՛հ, թանկագին երիտասարդ,- ասում է Ֆարֆանելլոն,- այո՛, լսել եմ հիշատակություններ այդ վայրի մասին, բայց այն չա՛տ հեռու է: Նախ և առաջ անհրաժեշտ է հատել օվկիանոսը, ինչի համար առնվազն մեկ ամիս կպահանջվի, հետո էլ նավարկությունը հղի է վտանգներով: Եվ թե անգամ ողջ-առողջ տեղ հասնես, Մարմոտա թագուհու քաղաքում քեզ ավելի մեծ վտանգներ են սպասվում. այն իր մեջ կրում է դժբախտությունը. չէ՞ որ այն Արտասուքի կղզի են անվանում:

Անդրեինոն, գոհ լինելով վերջապես հստակ նորություններ ստանալուց, Բրինդիսե նավահանգստից նավ է բարձրանում: Օվկիանոսով ճամփորդելը վտանգավոր էր հսկայական սպիտակ արջերի պատճառով, որոնք լողում էին նրանց կողքով և կարող էին անգամ վիթխարի նավեր տապալել: Բայց Անդրեինոն, փայլուն որսորդ լինելով, նրանցից վախ չունեւ, և նավը, խույս տալով սպիտակ արջերի ճիրաններից, ժամանում է Արտասուքի կղզի:

Նավահանգիստը, կարծես լքված լինեւ. չէր լսվում և ոչ մի ձայն: Անդրեինոն ափ է իջնում և տեսնում է հրացանը ձեռքին անշարժ կանգնած մի ժամապահի. նրանից ճանապարհ է հարցնում, բայց սա արձանի պես անշարժ կանգնած է մնում և լռում: Կանչում է բեռնակիրների՝ բեռները տանելու համար, բայց բեռնակիրներն էլ են մնում անշարժ, նրանցից ոմանք՝ ծանր արկղերը մեջքներին և պատրաստ կատարելու քայլ առաջ: Մտնում է քաղաք: Փողոցի մի հատվածում տեսնում է մի կոշկակարի՝ պատրաստ ձգելու փոկը, սակայն անշարժ և լռո: Մեկ այլ տեղ մի մատովակի է տեսնում, որ կուծը բարձրացրած՝ պատրաստվում էր մի տիկնոջ համար սուրճ լցնել, սակայն բոլորը անշարժ էին ու համր: Փողոցները, պատուհանները և կրպակները լի էին մարդկանցով, սակայն բոլորն ասես մեղրամոմից լինեին՝ կանգնած ամենատարօրինակ դիրքերով: Նույնիսկ ձիերը, շները, կատուները. բոլոր-

բոլորն անշարժ էին: Այս լռության մեջ պտույտ տալով՝ Անդրեիսնոն հասնում է մի հրաշակերտ ապարանք՝ լի արձաններով և կղզու հին թագավորների մասին հիշատակություններով տապանաքարերով, իսկ ճակատամասում մի խորաքանդակ կար՝ առատ զարդանախշերով, որոնց վրա արևի շողերի մեջ պարուրված ոսկյա տառերով գրված էր. «Նորին պայծառափայլություն Լուսավորյալների թագուհուն, ով թագավորում է այս Պարիմուս կղզում»:

«Որտե՞ղ կլինի այս թագուհին,-ինքն իրեն հարցրեց Անդրեիսնոն:-Արդյո՞ք նրան են Մարմոտա թագուհի անվանում»: Այս մտքերով տարված՝ բարձրանում է ալաբաստրե հսկայական մի սանդուղքով, անցնում ամբողջովին ճերմակ մի քանի սրահներով, որոնց դռների մոտ հսկում էին զինակիրները՝ դարձյալ հմայված: Սրահներից մեկում մարմարե սանդուղքը տանում էր դեպի մի վերնասրահ, որտեղ ամպհովանու տակ դրված գահը զարդարված էր ադամանդներով պատված արաքայական շքանշաններով:

Ոսկյա սկահակի մեջ դրված խաղողի որթատունկը այնպես էր աճել, որ ընձյուղները տարածվել էին ողջ սենյակով մեկ, և թե՛ գահը, թե՛ ամպհովանին ամբողջովին ծածկված էին խաղողի տերևներով ու հասուն ողկույզներով: Եվ այլ սկահակներից ու պատուհաններից այգու ամեն տեսակի մրգատու ծառերը ներթափանցել էին սենյակ: Անդրեիսնոն, երկար պտտվելուց քաղց զգալով, ծառի ճյուղից պոկում է մի խնձոր և կծում այն: Հազիվ էր խնձորը համտեսել, երբ աչքերի դիմաց ամեն ինչ խամրում է ու հետո սևանում: «Ես, դժբախտս,-բացականչեց:

- Ես կույր եմ: Եվ ի՞նչ եմ անելու այս անձանոթ երկրում՝ բնակեցված արձաններով միայն»:

Շոշափելով փորձում է գտնել ճանապարհը, սակայն ականայից ոտքերը դնում է մի թակարդի վրա, ընկնում դատարկության մեջ, ապա ընկղմվում ջրի մեջ: Ձեռքերը մի քանի անգամ տարուբերելով՝ ջրի երես է դուրս գալիս: Հազիվ էր

գլուխը դուրս հանել, երբ նկատում է, որ նորից ամենը լույսի մեջ է: Հայտնվել էր խորը մի ջրհորում, իսկ վերևում երկինքն էր: «Ահա թե ինչ,- մտածեց Անդրեինոն: -Սա այն ջրհորն է, որի մասին խոսում էր մոզը: Սա այն ջուրն է, որ կբուժի հորս, եթե իհարկե կարողանամ այստեղից դուրս գալ և ջուրը նրան հասցնել»:

Հանկարծ ջրհորի վրա կախված մի պարան է նկատում և, դրան կառչած՝ մագլցելով դուրս է գալիս:

Գիշեր էր, և Անդրեինոն քնել էր ուզում: Փնտրում է ու հանկարծ գտնում արքայավայել մի սենյակ՝ մեծ մահճակալով, որի վրա պառկած էր հրեշտակային գեղեցկությամբ մի աղջիկ: Աղջկա աչքերը փակ էին, շնչառությունը՝ հանգիստ, և Անդրեինոն հասկանում է, որ նա խոր քուն է մտել հմայության պատճառով: Փոքր-ինչ խորհելուց հետո Անդրեինոն հանում է շորերն ու տեղավորվում մահճակալին՝ աղջկա կողքին՝ այդպիսով նրա հետ անցկացնելով մի երանելի գիշեր, մինչդեռ աղջիկը ոչ մի կերպ ցույց չի տալիս, որ նկատել է Անդրեինոյի ներկայությունը: Առավոտյան անկողնուց վեր կենալով՝ սեղանիկի վրա թողնում է մի երկտող, որտեղ գրել էր. «Անդրեինոն՝ Իսպանիայի Մասիմիլիանո թագավորի որդին, 203 թվականի մարտի 21-ին մեծագույն հաճույքով քնել է այս անկողնում»: Վերցնում է տեսողությունը վերադարձնող ջրից մեկ շիշ ու մի խնձոր, որի պատճառով այն կարող էր կորցնել, և հեռանում է: Նավը վերստին կայանում է Բուդա կղզում, և Անդրեինոն գնում է եղբայրներին այցելելու: Նրանց պատմում է Արտասուքի կղզու հրաշքների մասին և ցույց տալիս այն խնձորը, որը կուրացնում էր, և ջուրը, որը վերականգնում էր տեսողությունը: Երկու եղբայրները, նախանձից իրենց կորցրած, սկսում են իրար մեջ դավեր նյութել: Անդրեինոյից գողանում են բուժիչ ջրով լցված շիշը և դրա փոխարեն դնում են նման մեկ այլ շիշ՝ լցված թարմ ջրով, ապա հայտնում են, որ ցանկանում են նրա հետ տուն վերադառնալ՝ հորն իրենց տիկնանց ներկայացնելու:

Հասնում են Իսպանիա: Մասիմիլիանո թագավորի ուրախությանը չափ ու սահման չկար, երբ իմացավ, որ իր երեք որդիները ողջ-առողջ վերադարձել են: Անցնում է գրկախառնությունների և ցնծության առաջին տարավր, և թագավորը հարցնում է.

-Եվ ո՞վ ձեզնից առավել բախտավոր գտնվեց:

-Սիրելի՛ հայր, համարձակվում եմ ասել, որ ես եմ եղել առավել հաջողակը, քանի որ գտել և տուն եմ վերադարձրել իմ կորած եղբայրներին. հասել եմ մինչև Մարմոտա թագուհու քաղաքը և գտել այն հրաշագործ ջուրը, որը կվերադարձնի Ձեր տեսողությունը: Եվ դեռ ավելին՝ մի այլ բան էլ եմ բերել, որի գործությունն անմիջապես կարելի է փորձել:

Հանում է խնձորը, տալիս մորը, որ համտեսի: Խնձորը կծելուն պես թագուհին կուրանում է ու ճիշ արձակում:

-Մի՛ վախեցեք, մայրի՛կ,- ասում է Անդրեինոն՝ պարզելով շիշը,-քանզի այս ջրի մի քանի կաթիլն էլ կարող է վերադարձնել ոչ միայն Ձեր, այլև հայրիկի տեսողությունը, ով երկար ժամանակ է, ինչ կորցրել է այն:

Բայց ջուրը եղբայրների փոխած շիշ էր, և տեսողությունը չի վերադառնում: Թագուհին լաց է լինում, թագավորը՝ գայրանում, Անդրեինոն՝ մնում ապշած: Այդժամ առաջ են գալիս եղբայրները և ասում.

-Մա պատահեց, որովհետև այդ նա չէր, որ գտավ Մարմոտա թագուհու ջուրը, այլ մենք: Ահա՛ այն:

Ու շփում են երկու ծերունիների աչքերը իրենց եղբորից խլված ջրով: Թագավորն ու թագուհին սկսում են առաջվա պես տեսնել:

Սկսվում է մի խառնաշփոթ. Անդրեինոն գոռում է եղբայրների վրա՝ նրանց գողեր և դավաճաններ անվանելով, իսկ եղբայրները նրան արհամարհում են՝ նրան վերաբերվելով որպես մի խաբեբայի: Թագավորն այլևս ոչինչ չի հասկանում, այդ ամենից և, բանը վերջանում է նրանով, որ սկսում է

հավատալ Գուլյետմոյի, Ջովաննիի ու նրանց կանանց խոսքերին, իսկ Անդրեինոյին ասում է.

–Լռի՛ր, անամո՛թ: Ոչ միայն չէիր ուզում բուժել ինձ, այլև ցանկանում էիր կուրացնել մորդ: Ջինվորնե՛ր, վերցրե՛ք այս երախտամոռին, առաջնորդե՛ք մի անտառ և այնտեղ էլ սպանե՛ք: Ցանկանում եմ, որ ինձ բերեք նրա սիրտը: Սրա համար պատասխանատու եք ձեր գլխով:

Ջինվորները դուրս են քաշում Անդրեինոյին, որ դեռ հուսահատ բողոքի խոսքեր էր հնչեցնում, և տանում են քաղաքից հեռու մի վայր: Սակայն Անդրեինոն կարողանում է նրանց իր պատմությունը պատմելու և համոզելու հնար գտնել: Չցանկանալով ձեռքերն անմեղ արյունով ներկել՝ զինվորները նրան ստիպում են խոստանալ, որ այլևս երբեք այդ երկիր չի վերադառնա, և ազատ են արձակում, իսկ թագավորին տանում են մի գեղջուկից գնած և հենց տեղում մորթած խոզի սիրտը:

Արտասուքի կղզում անցնում է ինը ամիս: Քնած գեղեցկուհին մի սիրուն փոքրիկի է լույս աշխարհի բերում ու հենց այդ ժամանակ էլ արթնանում է հմայությունից: Թագուհու արթնանալով կորչում է հմայությունը, որ նախանձից նրա դեմ դավել էր Ֆատա³ Մորգանան: Հմայությունից արթնանում է նաև ողջ ժողովուրդը, ու քաղաքը նորից կյանքի է վերադառնում: Հսկողության կանգնած զինվորները հանգիստ են առնում, իսկ արդեն հանգիստ առածները անցնում են հսկողության: Կոշկակարը ձգում է փոկը, մատովակը լցնում է սուրճը, իսկ նավահանգստի բեռնակիրներն իրենց բեռները դնում են մյուս բեռնակիրների ուսերին, քանի որ իրենք փոքր-ինչ հոգնած էին: Թագուհին աչքերը շփելով հարցնում է.

–Ո՞վ կարող էր խիզախել մինչև այստեղ հասնել և քնել այս սենյակում՝ այդպիսով ինձ և իմ թանկագին հպատակներին ազատելով հմայությունից:

³ Փերի

Այդժամ սպասուհիներին մեկը ցույց է տալիս սեղանիկի վրայի երկտողը, և այդպիսով թագուհին իմանում է, որ դա Անդրեինն էր՝ Մասիմիլիանո թագավորի որդին: Անմիջապես թագավորին մի նամակ է գրում՝ պահանջելով, որ իր մոտ ուղարկի Անդրեինոյին, եթե չի ցանկանում, որ իր դեմ պատերազմ հայտարարի:

Մասիմիլիանո թագավորը այս նամակը ստանալուն պես կանչում է Գուլյետոյին և Ջովաննիին, ասում, որ այն կարդան և հարցնում է նրանց կարծիքը: Երկուսն էլ չգիտեին՝ ինչ պատասխանել: Ի վերջո խոսում է Գուլյետոն:

–Այս պատմությունը հասկանալը դժվար է, եթե ինչ-որ մեկը չգնա թագուհու մոտ՝ նրանից պարզաբանումներ ստանալու: Կգնամ ես և ամենը կիմանամ: Գուլյետոյի ուղևորությունը շատ ավելի դյուրին էր, քանի որ Ֆատա Մորգանայի հմայությունն այլևս չկար, և արջերն էլ անհետացել էին: Ներկայանում է թագուհուն՝ ասելով, որ ինքն է արքայազն Անդրեինն:

Թագուհին, բնութթով կասկածամիտ լինելով, սկսում է հարցաքննել նրան:

–Ո՞ր օրն առաջին անգամ այստեղ եկար: Ինչպե՞ս գտար այս քաղաքը: Ես որտե՞ղ էի: Ի՞նչ պատահեց ապարանքում: Ի՞նչը նորից վերագտար: Եվ այսպես շարունակ: Գուլյետոն սկսեց ստեր հորինել, շփոթվել, կմկմալ, իսկ թագուհին համոզվեց, որ նա խաբեքա է: Նրան տանում են և գլխատում, իսկ գլուխը ցցում են մի սեպի վրա քաղաքի դարպասների մոտ այսպիսի մակագրությամբ. «Այսպես է լինում նրանց հետ, ովքեր խաբում են»:

Մարմոտա թագուհին մի այլ նամակ է գրում Մասիմիլիանո թագավորին՝ ասելով, որ եթե իր մոտ չուղարկի Անդրեինոյին, իր բանակն արդեն պատրաստ է պատերազմ սկսելու՝ կրակի մատնելու ամբողջ թագավորությունը, ոչնչացնելու թագավորին ողջ ընտանիքի ու հպատակների հետ միասին: Թագավորը, որ արդեն զոջացել էր Անդրեինոյին

սպանելու հրաման տալու համար, իր ամսոսանքն է հայտնում Ջովաննին:

-Եվ ի՞նչ ենք անելու հիմա: Ինչպե՞ս նրան բացատրել, որ Անդրեինոն այլևս չկա: Եվ ինչո՞ւ Գուլյետոն չի վերադառնում:

Այդժամ Ջովաննին առաջարկում է, որ ինքը գնա Մարմոտա թագուհու մոտ: Գնում է կղզի, սակայն երբ տեսնում է քաղաքի դարպասներից կախված Գուլյետոյի գլուխը, չի ցանկանում ուրիշ ոչինչ իմանալ և քամու պես սրընթաց ուղիղ տուն է վերադառնում:

-Հա՛յր իմ,- ասում է թագավորին,- մենք կորա՛ծ ենք: Գուլյետոն մեռած է, և նրա գլուխը կախված է քաղաքի դարպասներից: Եթե ես նույնպես ներս մտնեի դարպասից, հիմա ևս մեկ գլուխ կախված կլիներ:

Թագավորը, գլուխը ձեռքերի մեջ առած, մոլեգնած բացականչում է.

-Գուլյետոն մեռա՛ծ է: Նա՛կա: Ա՛հ, իսկապես որ, Անդրեինոն անմեղ էր, և այս բոլորը տեղի է ունենում ի պատիժ ինձ: Բայց դո՛ւ, Ջովաննի՛, գոնե դու ինձ ճշմարտությունն ասա՛, բացահայտի՛ր այս դավադրությունը նախքան մեռնելս:

-Մեղքը մեր կանանցն է,- ասաց Ջովաննին:- Մենք երբեք Մարմոտա թագուհու մոտ չենք գնացել, իսկ Անդրեինոյի շիշը փոխել էինք: Թագավորը, հայիոյելով, լաց լինելով, վշտից մազերը պոկոտելով, կանչում է զինվորներին, որ իրեն հայտնեն, թե որտեղ է թաղված Անդրեինոն: Զինվորների մեջ հուզմունք ու շփոթություն է առաջանում, և թագավորի մոտ, որն անմիջապես դա նկատեց, մի փոքր հույս է ծագում:

-Դե՛, ասացե՛ք ինձ ճշմարտությունը: Ինչպիսի՞ն էլ այն լինի, թագավորի խոսք եմ տալիս, ձեզ բա՛ց կթողնեմ:

Եվ զինվորները դողդողալով պատմում են, որ իրենց անհնազանդության պատճառով մահապատիժը չի իրականացվել: Եվ ի մեծ զարմանս նրանց՝ թագավորը, ուրախությունից իրեն կորցրած, սկսում է նրանց գրկել և համբուրել: Բոլոր անկյուններում հայտարարություններ են փակցնում, որ

Անդրեինոյին գտնողը թագավորից կստանա մի այնպիսի պարգև, որ ամբողջ կյանքում լիուլի կապրի:

Անդրեինոն վերադառնում է: Ծեր հոր սիրտը և ողջ արքունիքը լցվում է ուրախությամբ ու երջանկությամբ: Անդրեինոն անմիջապես մեկնում է Արտասուքի կղզի, որտեղ արժանանում է հաղթողին վայել ընդունելության:

-Անդրեինո՛, իմ և իմ ժողովրդի ազատարար,- ասում է թագուհին:- Դու ընդմիջ տ կլինես իմ ամուսինն ու թագավորը:

Եվ դեռ երկար ամիսներ կղզուց չէին դադարում ուրախության երգեր հնչել, ուստի այն վերանվանեցին «Ուրախության կղզի»:

*Թարգմանությունը՝ Արաքսյա Ստեփանյանի
(ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս)*

Գաբրիելե դ'Անունցիոն (1863-1938) ծնվել է Պեսկարայում 1863 թվականին: Նա քսաներորդ դարի այն սակավաթիվ իտալացի գրողներից էր, որը մեծ հռչակ էր վայելում ամբողջ Եվրոպայում: Իր նուրբ գեղագիտության շնորհիվ նա դարձել է եվրոպական դեկադենտիզմի ամենահայտնի ներկայացուցիչներից մեկը: Գեղագետ-գրողն ինքնարտահայտվում էր ոչ միայն իր գեղարվեստական գլուխգործոցների միջոցով, այլև իր վարքագծով, ապրելակերպով, յուրահատուկ հագուկապով և նույնիսկ իր այցելած վայրերով: Նա մեծապես կարևորում էր նաև զանգվածային հաղորդակցության նոր միջոցների դերը: Երբ նա շատ երիտասարդ էր՝ իր հաջողության առաջին տարիներին, նույնիսկ տարածեց իր մահվան լուրը՝ թերթերում մահախոսականներ ստանալու նպատակով:

ՀԱՅԻ ՊԱՀՈՑԸ

Հենց որ Լուկան լսեց հենակների ձայնը, լայն բացեց այրվող և մշուշապատ աչքերը և թեքեց հայացքը դեպի դռան կողմը՝ սպասելով, որ դռան շեմին կհայտնվի եղբայրը: Նրա տառապանքից ուժասպառ եղած, ջերմությունից մաշված, կարմրավուն բշտիկներով պատված դեմքը հանկարծ կոպիտ ու գրեթե զայրացած տեսք ստացավ: Նա ջղաձգված բռնեց մոր ձեռքերը և խոպոտ ու խզվող ձայնով սկսեց բղավել.

- Վռնդի՛ր նրան, վռնդի՛ր նրան: Ես չեմ ուզում նրան տեսնել: Հասկանո՞ւմ ես: Չեմ ուզում նրան տեսնել: Այլևս երբե՛ք: Հասկանո՞ւմ ես:

Բառերը խեղդում էին նրան: Նա ամուր սեղմել էր մոր ձեռքերը ու հագում էր շնչահեղձ լինելով, ամեն մի լարումից վերնաշապիկը վեր էր բարձրանում ու հետզհետե բացվում: Նրա բերանը այտուցված էր, իսկ կզակի վրայի բշտիկները

դարձել էին չորացած վերքեր, որոնք ամեն մի հագոցից պատռվում էին և արյունահոսում:

Մայրը փորձում էր հանգստացնել նրան.

- Այո՛, այո՛, որդի՛ս: Նրան չես տեսնի՛ ալլևա: Կանեն այնպես, ինչպես դու ես ուզում: Նրան դուրս կհանեմ, դուրս կհանեմ: Մա քո տունն է, որդի՛ս, ամբողջովին քոնն է: Լսո՛ւմ ես ինձ:

Լուկան հագում էր ուղիղ նրա դեմքին:

- Հիմա՛, հիմա՛, արա՛գ,- ասում էր նա կատաղի համառությամբ՝ վեր կենալով անկողնուց և մորը հրելով դեպի դուռը:

- Այո՛, որդիս: Հե՛նց հիմա:

Դռան շեմին, հենակների վրա կառչած, երևաց Չիրոն: Նա շատ վտիտ էր, մեծ ու ծանր գլխով: Նա այնքան շիկահեր էր, որ գրեթե ճերմակամազ էր թվում: Նրա աչքերը բաց կապույտ էին, երկար ու բաց թարթիչներով պատված և այնքա՛ն քաղցր, որ ասես հրեշտակի աչքեր լինեին:

Ներս մտնելով՝ նա ոչինչ չասաց, քանի որ կաթվածահար էր եղել ու դրա պատճառով էլ համր էր: Բայց տեսնելով հիվանդի աչքերը, որոնք վճռականությամբ լի ու դաժանաբար նրան էին նայում, անվճռական կանգ առավ սենյակի մեջտեղում՝ հենվելով հենակներին և չհամարձակվելով առաջ գնալ: Նրա ոլորված ու կարճացած աջ ոտքը թեթև, սակայն տեսանելի դողում էր:

Լուկան մորն ասաց.

- Ի՛նչ է պատրաստվում անել այս խեղանդամը: Դուրս վոնդի՛ր նրան: Ուզում եմ, որ դու նրան դուրս վոնդես, հասկանո՞ւմ ես: Հենց հիմա:

Չիրոն հասկացավ և տեսավ, որ խորթ մայրն արդեն պատրաստվում էր վեր կենալ: Չիրոն նրան այնպիսի աղերսագին հայացքով նայեց, որ նա սիրտ չարեց դաժան վարվել Չիրոյի հետ: Հետո թևի տակ դնելով մի հենակը՝ ազատ ձեռքով մի հուսահատ շարժում արեց և մի հայացք նետեց անկյունում գտնվող հացի պահոցին, ուզում էր ասել. «սոված եմ»:

- Ո՛հ, ո՛հ, չտա՛ս նրան ոչինչ, - սկսեց բղավել Լուկան, անհանգիստ շարժվելով ամբողջ մահճակալով մեկ և պարտադրելով կնոջը իր չար քմահաճույքը: - Ոչի՛նչ: Դուրս հանի՛ր նրան:

Չիրոն կրծքին խոնարհեց ծանր գլուխը, նա դողում էր ամբողջ մարմնով, իսկ աչքերը լի էին արցունքներով: Երբ խորթ մայրը ձեռքը դրեց նրա ուսին ու հրեց դեպի դուռը, նա պոռթկաց հեծկլտալով, բայց թույլ տվեց, որպեսզի իրեն առաջ հրեն: Հետո լսեց դռան փակոցի ձայնը և հեկեկալով մնաց միջանցքում միայնակ: Հեկեկում էր ուժգին ու միալար:

Լուկան զայրացած ասաց մորը.

- Լսու՛մ ես: Նա դա դիտմամբ է անում, ինձ վատություն անելու համար:

Եղբոր հեկեկոցը շարունակվում էր, երբեմն ընդհատվում այնպիսի արտասովոր, սիրտ կեղեքող հառաչանքով, որ ասես սաստկող ջորու խոխոց լինեք:

- Բայց դու լսու՛մ ես: Գնա՛: Վոնդի՛ր նրան աստիճանների վրայից:

Կինը մի նոր թափով վեր կացավ, վազեց դեպի դուռը և համրի վրա բարձրացրեց իր կոպիտ, ծեծելուն ու տանջանքների ենթարկելուն սովոր ձեռքերը:

Լուկան արմունկների վրա հենված լսում էր հարվածների ձայնը ու բղավում.

- Էլի, էլի:

Այդ հարվածների տակ Չիրոն լռեց և զսպելով արցունքները՝ իջավ փողոց:

Նա տանջվում էր սովից, երկու օր էր, ինչ հաց չէր կերել: Նրա ուժը հազիվ հենակները քարշ տալուն էր բավարարում:

Անհնազանդ տղաների մի խումբ վազում էր թռչող օդապարուկի հետևից, որը քամու օգնությամբ վեր էր բարձրանում:

Ոմանք նրան հրելով՝ բղավեցին.

- Հե՛յ, խեղանդամ:

Մյուսները ծաղրում էին նրան՝ բղավելով.

- Արի՛, ա՛յ բերբերական ձի, դե՛, արի՛ մրցենք:

Այլոք, ակնարկելով նրա մեծ գլուխը, նրան ծաղրելու համար հարցրեցին.

- Քանի՞ ֆունտ է ուղեդդ, խեղանդա՛մ:

Նրանցից մեկը, որն ավելի անմարդկային էր, հենակը Չիրոյի ձեռքից վայր գցեց և փախավ: Համբը օրորվեց, ապա դժվարությամբ վերցրեց այն և շարժվեց առաջ:

Չարաձճի տղաների ճիչերն ու ծիծաղը հետզհետե մարում էին դեպի գետը տանող ճանապարհի խորքերում: Օդապարուկը, ինչպես մի օտար երկրի թռչուն, բարձրանում էր դեպի ամբողջովին վարդագույն ու մեղմ երկինք:

Բաղնիքի երկայնքով, զինվորների խմբերը երգում էին երգչախմբերում: Զատկի տոնի նախօրեն էր, իսկ դրսում՝ չքնաղ եղանակ:

Չիրոն սովից աղիքների կծկում զգալով՝ մտածեց. «Այժմ ողորմություն կխնդրեմ»:

Հացի փոից զարնանային քամու հետ մեկտեղ տարածվում էր թարմ թխած հացի բույրը:

Անցավ սպիտակ հագուստով մի տղամարդ՝ գլխին մի երկար սկուտեղ, որի վրա շարված էին ոսկյա հացեր, որոնցից դեռ գոլորշի էր դուրս գալիս: Նրա ետևից երկու շուն էին գնում՝ մտութները վեր բարձրացրած, պոչերն էլ թափահարելով:

Չիրոն զգաց, որ տկարությունից շուտով ուշագնաց կլինի: Մտածում էր. «Այժմ ողորմություն կխնդրեմ, եթե ոչ, ապա կմահանամ»:

Օրը դանդաղ մարում էր: Թափանցիկ երկինքը ամբողջությամբ ծածկված էր օդապարուկներով, որոնք օրորվելով նահանջում էին ետ՝ դեպի երկիր: Օդում տարածվում էին շարունակական, հնչեղ ու խոր զանգերի ձայները:

Չիրոն մտածեց. «Այժմ կգնամ եկեղեցու դռների մոտ»: Եվ իրեն մի կերպ քարշ տվեց դեպի այդ կողմը:

Եկեղեցին բաց էր: Խորանի խորքում երևում էին թրթռա-
ցող բոցերը, որոնք փայլում էին՝ ինչպես մի համաստե-
ղություն:

Եկեղեցուց խնկի և բելզուիների բույր էր արձակվում: Ժա-
մանակ առ ժամանակ լսվում էր երգեհոնի հնչյունների ձայնը:

Չիրոն հանկարծ զգաց, թե ինչպես են աչքերը մշուշա-
պատվում արցունքներից: Նա աղոթեց իր հավատացյալ սրտի
խորքում. «Օ, Աստված իմ, գոնե դու ինձ օգնի՛ր»: Երգեհոնը մի
որոտ արձակեց, որը այնպես ցնցեց սյունները, ասես դրանք
լարեր լինեին: Հետո կրկին աշխուժացավ՝ պարզ նոտաներ
նվագելով: Լսվեցին երգիչների ձայները:

Աստվածապաշտ կանայք և տղամարդիկ երկու-երկու,
երեք-երեք ներս էին մտնում եկեղեցու միակ դռնով: Չիրոն դեռ
չէր համարձակվում մեկնել ձեռքը: Մի մուրացկան, ոչ այդքան
հեռու, ողբալից ձայնով խնդրեց.

- Ողորմությո՛ւն, ի սեր Աստծո:

Այդժամ համրը ամոթահար եղավ: Հանկարծ նա տեսավ,
որ խորթ մայրը եկեղեցի է մտնում՝ ամբողջությամբ կծկված սև
թիկնոցի տակ: Մտածեց. «Եթե գնամ տուն, մինչդեռ նա
դրսո՞ւմ է»: Նա այնպիսի սուր սով զգաց, որ այլևս չհապաղեց:
Նա հացի հույսով հենակների վրա սուրում էր դեպի առաջ:
Ճանապարհին մի աղջիկ նրան տեսնելով ծիծաղեց ու
բղավեց.

- Խեղանդա՛մ, մրցավազքի ես դուրս եկել:

Նա հասավ տուն կայծակնային արագությամբ. այդ արա-
գությունից սիրտը արագ բաբախում էր և նա շնչահեղձ էր
լինում: Մեծ զգուշավորությամբ և անաղմուկ բարձրացավ
աստիճաններով: Նա սկսեց խաբխափելով փնտրել բանալին
պատի մի խոռոչում, որտեղ խորթ մայրը սովորաբար այն
դնում էր, երբ դուրս էր գալիս: Գտավ այն և մինչև բացելը
նայեց բանալու անցքից. թվում էր, թե Լուկան քնած էր:

Չիրոն մտածեց. «Եթե կարողանայի՛ հաց վերցնել առանց
նրան արթնացնելու», և դանդաղորեն պտտեց բանալին շունչը

պահած՝ վախենալով, որ կարթնացնի եղբորը իր սրտի բա-
բախյունով: Նրան թվում էր, թե ողջ տունը լցվել էր իր սրտի
զարկերի ձայնով. «Իսկ եթե արթնանա՞», - մտածեց Չիրոն
սարսափահար, երբ զգաց, որ դուռը բացվել էր: Բայց սովը
նրան համարձակություն էր տալիս: Նա ներս մտավ՝ հագվել
հավելյով հատակին և հայացքը եղբորից չկտրելով. «Իսկ եթե
արթնանա՞»: Եղբայրը մեջքի վրա պառկած՝ ծանր շնչում էր
նիհիի մեջ: Ժամանակ առ ժամանակ նրա շրթունքների արան-
քից գրեթե թույլ սուլոց էր դուրս պրծնում: Ընդամենը մեկ մոմ
էր վառվում սեղանի վրա՝ պատին նետելով բազմապիսի լայն
ստվերներ:

Չիրոն, մոտենալով հացի պահոցին, մի պահ կանգ առավ
դռը հաղթահարելու համար, նայեց քնածին, ապա երկու
հենակները դրեց թևի տակ և փորձեց բարձրացնել կափարիչը:
Հացի պահոցը ուժգին ճռնչուն արձակեց:

Հանկարծ Լուկան անկողնուց վեր թռավ: Տեսավ, թե ինչ է
անում եղբայրը և սկսեց բղավել նրա վրա՝ մոլագարի պես
ձեռքերը թափահարելով.

- Օ՛, գո՛ղ, գո՛ղ, օգնություն՛ն:

Բայց կատաղությունը խեղդեց նրան: Մինչ սովահար
եղբայրը, կռանալով հացի պահոցի վրա, դողացող ձեռքերով
մի կտոր հաց էր փնտրում, նա ցած նետվեց անկողնուց և
վազեց դեպի եղբայրը, որպեսզի թույլ չտա նրան հացը
վերցնել:

- Գո՛ղ, գո՛ղ - գոռում էր նա ինքնամոռաց:

Ինքնամոռաց ծանր կափարիչով հարվածեց Չիրոյի պա-
րանոցին, որը հուսահատ ցնցվում էր, ինչպես գոհը թակար-
դում: Բայց Լուկան դիմադրում էր նաև այդ վերջին ջանքերի
դեմ և, ամբողջովին կորցնելով բանականությունը, այլևս չգի-
տակցելով, թե ինչ է անում, ամբողջ մարմնով այնպես էր սեղ-
մում կափարիչը, ասես ուզում էր գլխատել եղբորը: Կափա-
րիչը ճռռում էր, պատռում և մտնում էր ծոծրակի մսի մեջ,
ջախջախելով կոկորդը ու ձգմելով երակներն ու նյարդերը:

Հացի պահոցից կախված էր մի անշարժ մարմին, որում այլևս ոչ մի կենդանության շունչ չկար: Այդժամ, սպանված հաշմանդամի տեսքից, մի խելագար վախ մտավ եղբոր հոգու մեջ:

Նա, օրորվելով երկու կամ երեք անգամ, ետ ու առաջ արեց սենյակով մեկ, իսկ սենյակը մոմի կրակի թրթռոցից վախով էր լցվում: Հետո նա ձեռքերը դրեց ծածկոցների վրա, դրանք քաշեց դեպի իրեն, ամբողջությամբ փաթաթվեց դրանցով, ծածկելով նաև գլուխը, ապա մտավ մահճակալի տակ:

Եվ լռության մեջ այնպես էր լավում նրա ատամների զրնգոցը, ասես սղոցով երկաթ կտրելիս լինեին:

*Թարգմանությունը՝ Մարիամ Իսկանդարյանի
(«Միջմշակութային հաղորդակցություն՝ իտալերեն»,
մագիստրատուրա, 2-րդ կուրս)*

Vardges Petrosyan
Վարդգես Պետրոսյան

Vardges Petrosyan (9 agosto 1932, Ashtarak - 15 aprile 1994, Yerevan, sepolto ad Ashtarak) fu scrittore, drammaturgo, pubblicista, personaggio pubblico armeno, vincitore del Premio di Stato dell'URSS (1979, per i romanzi “Schizzi armeni” e “L'ultimo insegnante”), membro dell'Unione degli scrittori dell'URSS dal 1952.

Il tema principale delle opere di Vardges Petrosyan è la giovinezza. Il romanzo “Il noce solitaria” (1981, film: 1986, Hayfilm) è dedicato alle persone che vivono nei villaggi di montagna dell'Armenia e ai loro problemi quotidiani. I suoi libri “Mamma, sono già cresciuto” (Mosca, 1964), “Finestre semiaperte della città” (Mosca, 1973), “Farmacia Ani” e “L'ultimo insegnante” (Mosca, 1979), raccolta di romanzi e di racconti “Brani scelti” (Mosca, 1982) e altri libri sono stati pubblicati in russo. Le sue opere sono state tradotte in lituano, lettone, bulgaro, inglese, serbo-croato, ceco, ucraino, azero, georgiano, kirghiso, ungherese e altre lingue.

Le sue opere “Il cappello di Ippocrate è duro” (1975) “L'ultimo insegnante” (1979), “Schizzi armeni” (1980), “Anni vissuti e non vissuti” (1982) sono state messe in scena. Fu insignito della Medaglia di Lenin (1984), della Medaglia della Rivoluzione d'Ottobre (1982) e del Distintivo d'Onore.

LA CONVERSAZIONE DI MEZZANOTTE

I vetri delle finestre diventano pian piano blu, poi si cambiano in viola, poi diventano quasi neri. La mia stanza d'albergo si trova molto in alto, al sedicesimo piano; le luci della città quasi non si sentono. È meglio così. Ci mancano mille e una cosa... abbiamo mai pensato, però che molto di più ci manchiamo noi stessi? Soprattutto

in una città lontana e sconosciuta dove non ci sono amici, parenti, famigliari, nemici, è meglio chiudersi in una stanza d'albergo e guardare fuori dalla finestra. È da molti anni che non vedevo bene come tramontava il sole. Oggi l'ho visto dettagliatamente, e se fossi stato uno scrittore o un pittore, forse avrei potuto descriverlo. Oggi il sole sembrava molto stanco. Povero sole; ogni giorno si alza alla stessa ora, lavora con la stessa fatica eterna, quel lavoratore tormentato e straziato dell'universo. Quanti milioni di anni lavorerà ancora? Chissà!

La solitudine fa nascere pensieri strani che al momento sembrano geniali, è forse per questo motivo che gli artisti creano in solitudine. Non so. Dalla fessura della porta è appeso un filo giallo – la luce del corridoio. Sul tavolo c'è il telefono, ma so che rimanderà zitto finché qualcuno, qualche moscovita nervoso, non comporrà il numero sbagliato. Oppure forse Vahe ha già dato il nostro numero a qualcuno? Niente, risponderò: "Vahe non è a casa! Quando ritornerà? – È andato in biblioteca a studiare". Bussano alla porta. Chi sarà? Ma certo, la cameriera. Accendo veloce la luce, la mia solitudine svanisce come il fumo di sigaretta e le cose, le immagini della stanza prendono vita.

"Prego, entri!".

Dapprima la cameriera spinge dentro il carrello carico di bottiglie, di piatti, poi entra lei guardando intorno. È una donna di mezza età con i capelli tinti chiari.

Dal tavolo prende gli oggetti inutili e li mette a fianco: il mio zaino, gli occhiali da sole di Vahe, il portacenere, al posto di questi mette le bottiglie e i piatti che aveva portato lei. Io seguo le sue mani; lei fa il suo lavoro con i veloci movimenti abitudinari e solo dopo che ha finito chiede:

"È in ritardo?".

All'inizio non capisco la domanda.

"Lei ha ordinato per due persone, no... ?".

"Sì, certo" alla fine capisco.

“Allora, è in ritardo?”.

“Sì, molto in ritardo... non so se verrà...”.

“Verrà” sorride triste la donna “se ha promesso, verrà”.

“Ha promesso” dico io “ha promesso. Berrebbe un bicchiere con me?”.

“Grazie” risponde la donna “Sto lavorando, è vietato. Grazie. Quando finisce, chiami il ristorante allo stesso numero, chieda di Sciura. Io verrò e sparecchierò la tavola. Buona serata”.

“Grazie”.

La donna se ne va, di nuovo spengo la luce, fumo una sigaretta. Una goccia di luce della sigaretta dà tanta luce al buio, suscita vita. Riempio bicchieri di vino rosso. Al buio non si vede il colore, ma io l’ho ordinato rosso, probabilmente è rosso. Faccio un brindisi e nel buio sento la mia voce: “Alla tua salute, papà!”.

Oggi è il compleanno di mio padre. Oggi avrebbe compiuto settantacinque anni, però non c’è più da trentaquattro anni. Qualche settimana fa ho compiuto il mio quarantunesimo anno, quindi siamo pari con mio padre. Potrei anche dire che di lui ho due o tre settimane in più. Allora, possiamo sederci come amici, come coetanei e chiacchierare, bere insieme. Per quanto possibile ho ordinato i suoi cibi preferiti. Essi rimarranno così sulla tavola, e Sciura, così buona e ingenua, quando ritornerà a sparecchiare la tavola, si stupirà tristemente: “Non è venuta... ?”. Io stavo aspettando mio padre, Sciura.

“Alla tua salute, papà!”.

